



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Մ Ա Ն

2 սեպտեմբերի 2016 թվականի N 887 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 31-Ի N 344-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ Մ Ա Ն** է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով տեղական ինքնակառավարման մարմիններին պետական աջակցության նպատակով նախատեսված հատկացումները բաշխելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1555-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 344-Ն որոշման N 2 հավելվածի ցանկի «ՀՀ Գեղարքունիքի մարզ» բաժնի 56-րդ կետում «Սևանի քաղաքային համայնքին ճանապարհների հիմնանորոգման համար սուբվենցիաների տրամադրում» բառերը փոխարինել «Սևան համայնքին՝ 2015 թվականին համայնքում իրականացված ճանապարհների հիմնանորոգման համար սուբվենցիաների տրամադրում (նախորդ տարվա կապիտալ ծախսերի մարում)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2016 թ. սեպտեմբերի 5
Երևան



Հ. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ